# ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՌԻԹՈՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ Պ. ՔԱՄԻԼ ՇԱՄՈՒՆԻՆ

ԲԵՅՐՈՒԹ

Խորապէս զգածված Ձեր երկրին հասած աղետեն, կհայտնենք Մեր ցավը՝ մաղթելով Ձեզ ուժ և կորով՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները: Կաղոթենք Աստուծո Լիբանանի բարօրության և երջանկության համար: Օրհնություններ:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ՀՌՈՄ, 19 ՄԱՐՏ 1956

---

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐՈՅԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ—ԲԵՅՐՈՒԹ

Խորապես հուզված և մտահոգված Ձեր բարի երկրին պատահած աղետեն, կմաղթենք Ձեզ ուժ և կորով և աստվածային օգնություն՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները: Կմնանք աղոթող մեր հավատացյալներու և Լիբանանի ազնիվ ժողովուրդի բարօրության ու խաղաղ առաջընթացի համար:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ՀՌՈՄ, 19 ՄԱՐՏ 1956

---

## ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՌՈՄ

Խորապես զգացված Ձեր համակրանքի արտահայտություններից և սիրալիր զգացումներից Նորին Գերազանցություն Հանրապետության Նախագահը Ձեզ ուղղում է լավագույն շնորհակալություններ:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ ՀԱՅՄԱՐԻ

ԲԵՅՐՈՒԹ, 21 ՄԱՐՏԻ 1956 Թ.